


4986



1885

98. Р. Намчакбеков. "Мемлекеттегиң көзөнүү таңы. 7-н  
жайгаштырылганда сабак?" Жарык.

## ՏԱՐՐԵԿՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՔ

# ՅԱԼԵԼՈՒՄՔ

ԴԱՅՐԵՆԻ ԲՈՐԲԱԼԻ“ ՎՐԱՅ



Աշխատասիրութիւն

### ՌԱՓԱՅԵԼԻ ՊԱՏԿԱՆԵԱՆ

Տեսչ Ն. Նահիջևանի Աբրամովիչ Գորդոյ.

БИБЛИОГРАФИЧЕСКАЯ  
ИНСТИТУТА  
ВОСТОКОВЕДЕНИЯ  
АКАДЕМИИ НАУК  
СССР

### ԹԻՖԼԻԶ

ՏՊԱՐԱՆ ՅՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆՑԻ  
ՕՐԵՆԵՑԻ ՓԱԶԱ, Տ. 1 / 2.

1885

491.99-8  
7-29

2002

2010

985  
985

# ՏԱՐԵԿԵՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՔ

## ՅԱԻԵԼՈՒՄԾՔ

ԱՅՐԵՆԻ ԲԱՐԲԱՐԻ“ ՎՐԱՅ

Աշխատասիրութիւն

ՊԱՓԱՅԵԼԻ ՊԱՅԿԱՆԵԱՆ

Տեղ Ն. Նովկանի Աբու-Եսայական Դպրոցի.

ԲԻBLIOGRAPHI  
ИНСТИТУТА  
ВОСТОКОВЕДЕНИЯ  
Академии Наук  
СССР



ԹԻՖԼԻԶ

ՏՊԱՐԱՆ ՅՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ

ՕՐԵԼԵԱՆ ՓԱՂԱ, Տ. 1 | 2.

1885

ԳՐԱԴԱՐԱՆԻ ԸՆԹԱՅՑ

# ԳՐԱԴԱՐԱՆ

ՅԱՐԱ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄԻՏԱՑԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ

5046-նի



36078-66

Дозволено цензурою. С.Петербургъ. 2 Января 1885 г.  
Типографія И. Мартиросіанца, на Орб. ул., д. № 1/2.

1885

Եմայաց այս մասի համար այսուհետու պահպան  
է առաջիկ թիվ (701) բայց մասնաւ զարդ չկա  
րու և այս մասը պահպան չեն առաջ մաս առաջակա

ձրու (702) բայց մասնաւ զարդ չկար և այս մասը պահպան

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԳԻՐՔ

## ՀԱՅԿԱԿԻ ԳԻՏԵԼԻՔ

Ա. ԱՇԽԱՐՀԱԳԻՏՈՒԹԻՒՆ

Աշխարհագրութիւնը այնպիսի գիտութիւն է, որ կը-  
սովորեցնէ մեզ աշխարհքիս ինչ լինելը:

Աշխարհքս մէկ ահագին երկրագունդ է՝ զանազան  
նկալմերէ բաղկացած և մէջը դատարկ:

Հօրիզոն կ'ասուի այս մեծ շրջանը, երբ մարդս կանգ-  
նած է դաշտի մէջ, և նորա աչքին կ'երևալ ինչպէս եր-  
կինք ու գետին մէկ մէկու կրդիպչին:

Աշխարհքս ունի չորս կողմ արևելք, արևմուտք,  
հարաւ և հիւսիս:

Աշխարհքս կողմերը այսպէս պիտի գտնել. ցերեկուայ  
12 ժամին (միջօրէ, կէսօր) պէտք է երեսը դարձնել արե-  
գակին, այդ հարաւ է. ետևը կըլինի հիւսիս, ձախ  
կողմդ կըլինի արևելք և աջ կողմդ արևմուտք:

Մեր բնակած աշխարհքը (հողագունդ, երկրագունդ)  
ունի երկու շարժմունք, մէկը իրեն շուրջը (չորս քովը) և  
միւսը արեգակին շուրջը. երբոր աշխարհքը իրեն շուրջը  
կըպտըտի՝ կրդոյանան ցերեկ ու գիշեր այսինքն օր. իսկ  
երբոր նա արեգակին շուրջը կըպտըտի՝ կրդոյանայ տարի,

ալսինքն՝ տասներկու ամիս, կամ լիսուն երկու շաբաթ, կամ երեք հարիւր վաթսուն հինգ (365) օր:

Աշխարհքս ունի դլոր ձև՝ գնդակի նման, և այդ պատճառաւ կ'ասուի երկրագունդ:

Երբոր աշխարհքս երեն ստուերը (շուքը) կրծքէ լուսնեակին վրայ՝ այդ ստուերը անպատճառ դլոր ձև կ'ունենալ. իսկ մեզ յայտնի է, որ միայն դլոր առարկաները (բաները) կարող են դլոր ստուեր ունենալու: Ուրեմն աշխարհքս դլոր է: Եթէ նաւը միշտ ու միշտ դէպի արեւելք երթայ՝ նա անպատճառ արևմուտքէն պիտի վերադառնայ իրեն տեղը. այդ ևս կրցուցնէ, որ աշխարհքս դլոր է: Եթէ մեզմէն մէկ մարդ կրհեռանայ՝ առաջ նորաներքել մասը կ'անհետանայ, յետոյ միջին մասը և վերջապէս վերին մասը: Այդ ևս կրցուցնէ որ աշխարհքս դլոր է, այսինքն գնդաձև է:

Տիեզերքի կամ համատարած աշխարհքի մէջ կան չորս տեսակ երկնալին մարմիններ, որք են՝ արեգակներ կամ անշարժ աստղեր, մոլորակներ կամ շարժուն աստղեր, արբանեակներ կամ լուսիններ և գիսաւորներ կամ պոչով աստղեր:

Արեգակը (արեւը) անշարժ աստղ է միջիօնաւոր անգամ երկրագունդէս մեծ, որ կուտայ մոլորակներուն լոյս և ջերմութիւն (տաքութիւն):

Մոլորակը այնպիսի շարժուն աստղ կամ երկրագունդ է, որ չունի իւր սեպհական լոյսը և ջերմութիւնը, այլ կրտսանայ նոցա արեգակին շուրջը ման գալով (պտըտելով):

Լուսինը կամ արբանեակը այնպիսի երկնալին մարմին է, որ կըպտըտի մոլորակի շուրջը և նորա հետ միասին կըպտըտի արեգակին շուրջը, և կըստանայ նորամէն լոյս և ջերմութիւն:

Գիսաւոր կամ պոչով աստղ ախսիսի մոլորակ է, որ գեռ ևս (առաջ) ամրացած չէ, այլ տակաւին գոլորշի (պուշ) է:

Բացի այդ չորս տեսակ (աստղերէն տիեզերքի մէջ կան ուրիշ աստղեր ևս. բայց նոքա այնքան հեռու են մեզմէն, որ մէկ մէկ չեն երկնալ մեր աչքին, այլ նոյսա անհամար բազմութիւնը միասին (կ'երկնալ գիշերուայ մաքուր երկնքի վրայ և կ'ասուի յուրդուշ կամ ծեր էւլին: Այս ճշշմարտութիւնը համար մենք այսպէս դատենք. մէկ հատիկ դալար խոտը 5—6 վեռութէն չի երկնալ. բայց միջիօնաւոր բանջարներ որ կ'բնին դաշտի վրայ՝ շատ հեռուէն կ'երկնան:

Ինչպէս վերը լիշեցինք՝ երկրագունդս ունի երկու շարժումն, նախ՝ արեգակի շուրջը, ուստի կրգոյանայ տարի երեն չորս եղանակներովն, որք են՝ գարուն, ամառ, աշուն և ձմեռ, և երկրորդ՝ երեն շուրջը, ուստի կրգոյանայ օր՝ ցերեկով (տիւ) և գիշերով:

Երկրագունդի կատարած շրջանը արեգակի շուրջը գլոր չէ, այլ բոլորշի (էրկանկէկ) է, այսինքն ձուաձև (հաւկիթի ձևով):

Բևեռներ<sup>1)</sup> կ'ասուին այս կէտերը, օր կըդժնուին երկրիս հիւսիսալին և հարաւալին ծալրերը. իսկ լսեռ<sup>2)</sup> կ'ասուի այն գիծը, որի վրայ երկրագունդը կըպտըտի իրեն շուրջը: Իսկապէս երկիրս չունի ոչ բևեռներ և ոչ լսեռ. գոքա երևակայական, այսինքն միտքով ստեղծած գիծ և կէտեր են:

Երկրագունդը ուղղահայեց, այսինքն շիփ-շիտակ կանդնած չէ արեգակի առջև, այլ մի վոքը ծուռած է,

<sup>1)</sup> полюсъ, <sup>2)</sup> ось земная.

ուստի կըգուանան չորս եղանակները՝ գարուն, ամառ,  
աշուն և ձմեռ:

Երկրագնդիս վրայ գտնուած տեղերը (լճեր, գետեր,  
սարեր, քաղաքներ և այլն) աւելի ճիշդ որոշելու համար՝  
նորա վրայ կըգծագրեն մտաւոր գծեր, որոնց մէջ նշա-  
նաւոր են՝ հասարակած<sup>1)</sup>, զուգահեռական<sup>2)</sup>, բևեռա-  
կան<sup>3)</sup>, արևադարձական<sup>4)</sup> և միջօրէական<sup>5)</sup>:

Լուսինը մեր բնակած երկրագնդի արբանեակն (հետո  
քալող ծառալ) է. նա երկրիս շուրջը 28 օրը մի անգամ  
կըպտրտի. այդ միջոցին նա չորս անգամ կըփոխէ. իւր  
ձեւ և կ'ասուի մահիկ (❶), աճումն (❷) լիալուսին (❸)  
նուազումն (❹) և փուլ (❺), երբոր չ'երևնալ:

Երբոր մեր բնակած հողագունդը կըգտնուի արեգակի  
և լուսնի մէջ այնպէս, որ իւր ստուերը կըձգէ լուսնի  
վրայ նա կմթանալ, և այդ կ'ասուի խաւարումն լուսնի:

Երբ որ երկրագնդի ու արեգակի մէջ կեցած է լու-  
սինը այնպէս, որ արեգակի լոյսը չէ կարող երկրիս վրայ  
ընկնելու՝ մեր երկիրը կըմթնի, և այդ կ'ասուի արեգակի  
խաւարումն:

Երկնքի վրայ միայն այս մոլորակները առանց հե-  
ռադիոտակի կերպին՝ լուսնթագ, Աւրանոս, Երևակ, Նեպ-  
տուն, Արտասեակ կամ Լուսաբեր. իսկ մնացած միւս մոլո-  
րակները առանց հեռադիտակի չեն երևնալ:

Երկրիս մակերեսովիթը<sup>6)</sup> կամ երեսը բաղկացած է ցա-  
մաքէ ու ջրէ, և նոցա փաթաթած է մթնոլորտը<sup>7)</sup>, այ-  
սինքն զանազան աստիճանի թանձրութեան օղը:

<sup>1)</sup> экваторъ, <sup>2)</sup> параллель, <sup>3)</sup> полярный кругъ, <sup>4)</sup> тро-  
пики, <sup>5)</sup> меридианъ, <sup>6)</sup> поверхность, <sup>7)</sup> атмосфера.

Երկվիր ասելով մենք պիտիս հասկանանք մէկ ահա-  
զին հողեղին գունդ, որի կեղեր (կճեպ) լիսուն վեռութ  
հաստութիւն ունի, իսկ ներսամկողմքը լցուածաէ ոջիացած  
և գոլորշիացած նիւթերով: այժմարիք (այժմար)՝  
Երկրին վրայ հողը և ջուրը հաւասար փոռածաշեն. Ե-  
րկրիս երեսի մէկ քառորդը ( $\frac{1}{4}$ ) հողով ծածկած է, իսկ  
երեք քառորդը ( $\frac{3}{4}$ ) ծածկած է ջրով: մարտուայ  
Յամաքահող<sup>1)</sup> կ'ասուի այս մեծ տարածութիւնը  
հողին, որ ծովի ելեսէն վեր է, ջրով ծածկած չէ. չոր է  
և այս են ցամաքահողերու անունները. Արևելեան ցամա-  
քահող, Արևելտեան ցամաքահող, Հարաւ-արևելեան ցա-  
մաքահող (Աւստրալիա) և Հարաւ-բևեռալին ցամաքահող:  
Կղզին<sup>2)</sup> փոքրիկ ցամաքահող է, որի շուրջը պա-  
տած է ջրով: կղզին փոքրիկ է և այս պատճենայ  
Կղզիները կազմուել են կամ հրաբուխի<sup>3)</sup> գորութիւ-  
նով և կամ պղղիպող<sup>4)</sup> ասած մանր ժժմակներու (ճճու):  
աշխատանքով:

<sup>1)</sup> континентъ, <sup>2)</sup> островъ, <sup>3)</sup> вулканъ, <sup>4)</sup> полинъ,

<sup>5)</sup> архипелагъ, <sup>6)</sup> полуостровъ.

Կղզիախումբ<sup>5)</sup> կ'ասուի շատ կղզիներ՝ մին մինի մօտ  
կեցած:

Եւրոպալի մէջ գտնուած գլխաւոր կղզիները սոքա են՝  
Նօվայեա-Զեմլեա, Վայգչաշ, Քաղզուեկ, Սօլօվէցքի, Լաֆո-  
դէն, Խուսնդիա, Փառէոս, Մեծն-Բրիտանիա, Իռլանդիա,  
Ճէթլանդեան կղզիներ, Օքքաղեան կղզիներ, Հիբրիդեան,  
Զէլանդ, Փիւնէն, Խլանդ, Հօթլանդ, Էղէլ, Բալէառեան,  
Կորսիկա, Սարդինիա, Եզրա, Սէկուլիա, Մալտա, Կանդիա,  
Կիլաղեան կղզիներ և Սարրադեան կղզիներ: միանուողը  
Թերալզիի<sup>6)</sup> կասուի այնպիսի ցամաքահող, որն ե-

<sup>1)</sup> континентъ, <sup>2)</sup> островъ, <sup>3)</sup> вулканъ, <sup>4)</sup> полинъ,

<sup>5)</sup> архипелагъ, <sup>6)</sup> полуостровъ.

բեք կողմէն պատած է ջրովու միայն մէկ կողմէն ցամաքահողին է կամած: Եւրոպայի ժերակղիները սոքա են՝ Ալանդինաւեան (Ճուեդիա և Նորվիգիա), Եութլանդեան (Դանիա), Պիրինեան (Սպանիա), Ալպենինեան (Իտալիա), Բալկանեան (Տաճկաստան), Մորէա (Յունաստան), Տաւրիկեան (Խրիս): առօր խրաբ (1) դրուաց վեն խոնդ այլիլոյ

Հրուանդան (2) կ'ասուի շատ ափոքը իկ ժերակղին, որ սարի նման կարկառած է դէպիւծով: Եւրոպայի երկելի հրուանդանները սոքա են՝ նօուր-Քափ, Ալնդէսնէս, Սքագէն, Վիզաոդ, Ֆլինիսթէռուէ, Լեա-Թօք, Սէն-Վինսէնթ, Թարիֆա, Մաթափան: բանցանաց մաժանձ (3) բանց Պարանոց (4) կ'ասուի այն նեղ երկիրը, որիը կմիաւորէ երկու ցամաքահող կամ աշխարհ: Եւրոպայի երկելի պարանոցները սոքա են՝ Կորնթոսի, Օրի և Կաւկասեան: Խառ Երկրի մակերեսով կամ երեսը զանազան ձևեր կ'ունենայ և այդ պատճառաւ կ'ասուի խաղ, հովիտ, սարահարթ, սար կամ լեառն: Խաղ (5) կ'ասուի այնպիսի մակերեսով, որ ծովին շատ սակաւաքարձը լինելով, քամիի ժամանակ ջուրով կը ծածկուի: Հովիտ (6) կ'ասուի այնպիսի երկիր, որ ծովի մակերեսութէն մինչև 500 ձորաչափ (7) բարձր է: Խոկ սարահարթ (8) կ'ասուի այնպիսի երկիր, որ ծովին 500 ձորաչափէն աւելի բարձրէ: այս բանց ամանալատ (9) կ'ասուի այնպիսի հովիտ, սորիւ երեսը ծածկուծ է աւագով, վրան ոչ գետ կայ և ոչ անտառ: Ովասիս (10) կ'ասուի այնպիսի, մոքքիկւ երկիր, որի վրայ կը բնին ծառու կը բնի մեծին կը գտնուի մեծամեծ գետերու եղերքը, ուր խոտը շատ կ'աճի և կը բարձրանայ: Բլուր (11) կ'ասուի այն քարէ կամ հողէ բարձր տեղը, որ դէպի վեր կը բարձրանայ մինչև 2000 ոտնաչափ. Խոկ դորամէ բարձրը կ'ասուի սար կամ լեառն (լեռ): Սարը երեք մասն ունի՝ ստորոտ (12), լանջ (13) և դագաթ (14): Ստորոտ կ'ասուի սարի վալրի մասը, լանջ կ'ասուի սարի մէջ-տեղի մասը, խոկ գագաթ: կ'ասուի սարի ամենաբարձր մասը կամ զլուխը:

Բարձր սարերու ձորերու (15) մէջ կը ժողովուի սառուցը (առողջը), որն իրեն ծանրութիւնով կամաց կամաց վայր գալով կուղայ մէկ հարթ տեղ կը կանգնի, և այդ կ'ասուի սառնագաշտ (16): Խոկ ձիւնակոյտը (17) այսպէս կը կազմուի. քամին վչելով սարերու վրայ վոքրիկ ձիւնէ դնդակներ կը կազմէ, որ երթալով կը մեծնան և վերջապէս ահազին մեծութեան հասած սարէն վայր կը զլորուի, և եթէ ճանապարհին պատահ ճամփորդ, կամ ծառ, կամ տուն և կամ ամբողջ գիւղ՝ բոլորը կը արդէ կը սրբէ և հետը կը տանէ:

Եւրոպայի նշանաւոր լեռները սոքա են՝ Ալպեան, Պիրինեան, Ալպենինեան, Բալկանեան, Կարպատեան, Կաւկասեան, Ռուսական, Փինկանդեան, Ալանդինաւեան: Հրաբու (18) կ'ասուի այնպիսի սար, որի մէջ տեղը

(1) մաս, (2) перешеекъ, (3) низменность, (4) равнина, (5) сажень, (6) горная возвышенность, плато, плоскогорье, (7) пустыня, (8) оазис.

ծակէ, և այդ ծակը հաղորդակցութիւն ունի հողագնդիս կրակի հետ։ Ժամանակէ ժամանակ հրաբուխի մէջէն կրակ և շուալ կ'ելլէ սարսափելի դղրդոցով։ Լաւա կընշանակէ հալած քար, հող և մետաղներ<sup>(1)</sup>)։ Եւրոպայի երևելի հրաբուխները սոքա են։ Վեսուվ, Ետնա և չեքլա։

Աշխարհածով<sup>(2)</sup>) կամ համատարած ծով կ'ասուի այն ահագին տարածութիւնը ջրին, որ պատել է աշխարհս ամեն կողմէն։ Աշխարհածովը կրաժանուի հինգ մասն, որք են՝ Հիւսիսային Սառուցեալ Ովկիանոս, Հարաւալին Սառուցեալ Ովկիանոս, Ատլանտեան Ովկիանոս, Մեծ, կամ Արևելեան, կամ Խաղաղական Ովկիանոս և Հնդկական Ովկիանոս։

Ափ կամ եղը (<sup>Քէսոր</sup>) կ'ասուի այն դիմը, որ կըբաժանէ հողը ջրէն։ Ծովի ափը մէկ բառով կ'ասուի ծովափ կամ ծովեզը, իսկ գետի ափը՝ գետափ կամ գետեզը։ Գետը երկու ափ ունի՝ աջակողմեան և ձախակողմեան։ Եթէ կ'ուզես գետի աջ ափը ջոկել ձախէն՝ երեսդ պիտի դարձնես դէպի ծով, այսինքն դէպի ջրի վաղած կողմը, ձախ կողմիդ ափը կ'ասուի ձախ կամ ձախակողմեան ափ և աջ կողմիդ ափը կ'ասուի աջ կամ աջակողմեան ափ։ Ծով կ'ասուի ովկիանոսի փոքրիկ մասը։ Եւրոպայի նշանաւոր ծովերը սոքա են՝ Սախտակ ծով, Բալտիկեան ծ., Հիւսիսային ծ., Միջերկրական ծ., Եդէյեան ծ., Մարմարեան ծ., Սև ծով, Աղախի ծով։

Այն մասը ծովին, որ կըմտնէ ցամաքահողի մէջ՝ կ'ասուի ծովածոց<sup>(3)</sup>)։ Եւրոպայի նշանաւոր ծովածոցերը սոքա են՝ Օնեգայի, Պուէնայի, Մեզէնի (Սպիտակ ծովի մօտ), Բոտնիկեան, Ֆիննեան, Միդայի, Զունդ, Մեծ Բէլթ,

<sup>(1)</sup> металль, <sup>(2)</sup> weltmeer, <sup>(3)</sup> заливъ, губа.

Փոքր Բէլթ, Սքազգէն Քատթէգալթ, Փաղէքալէ, Լամանշ, Բիսքայեան ծով, Լիօնի ծոց, Գենուայի ծոց, Աղրիական ծով, Թարդանելեան ծոց։

Ծովի ջրի համը դառնաղի է, այսինքն աղի և կծու։ և դորա պատճառը այն է, որ գետերը անցնելով զանազան համ սւնեցող հողերու վրայէ՝ նոցա մէջ գտնուած աղի և կծու առարկաները հետերը կ'առնուն և կըթափեն ծով։

Ծովի խորնկութիւնը շատ զանաղան է։ ծովեր կան որ մինչև տասնը վեռութ խորնկութիւն ունին, իսկ երեմն մարդս կարողացած չէ քանի մի ծովերու խորութիւնը չափելու։ Ծովի խորութիւնը կը չափուի խորաշափ<sup>(1)</sup>) ասած գործիքով։

Ծովը շատ սակաւ խաղաղ կըմնայ. տարուայ մեծ մասը նա անդադրում շարժման մէջ է։ Ծովի ջրի շարժումնը երեք զանաղան պատճառներէ կըյառաջնայք Նախ՝ լուսինը դէպի իրեն կըքաշէ ծովի ջուրը և կըբարձրացնէ. այս բարձրանալը ծովին և իջնելլ կ'ասուի մակընթացութիւն<sup>(2)</sup> և տեղատուութիւն<sup>(3)</sup>։ երկրորդ՝ մեր հողագնդի իր շուրջը պտույտ գալէն կըյառաջնան կանոնաւոր հոսանք<sup>(4)</sup>։ և երրորդ՝ քամիներու փչելէն կըյառաջնան ծփանք<sup>(5)</sup>), ալիք<sup>(6)</sup> և ալէկոծութիւն<sup>(7)</sup>։

Յորձանք<sup>(8)</sup>) կ'ասուի ջրի այնպիսի տաղի շարժողութիւնը, որ կըյառաջնալ երկու միմեանց հակառակ հոսանքներէ։

Ովկիանոսի ջուրերը անդադար դոլորշիանալով<sup>(9)</sup> կը

<sup>(1)</sup> лотъ, <sup>(2)</sup> приливъ, <sup>(3)</sup> отливъ, <sup>(4)</sup> пассаты, <sup>(5)</sup> зыбъ,

<sup>(6)</sup> волны, <sup>(7)</sup> буруны, <sup>(8)</sup> водоворотъ, <sup>(9)</sup> испаряться, լուսաւում.

բարձրանան դէպի վեր և կը գոյացնեն ամպեր: Երբ որ  
ամպերը այն աստիճան կը թանձրանան, որ նոցամէն կը  
սկըսին արդէն անձրւի կաթիլներ (շիթ) կաթելու ակա-  
սուխն թուխալ<sup>1)</sup>: Թուխալը դէպի վայր կուգանցանձ-  
րւ, ձիւն և կարկուտ:

Աղբիւրները այսպէս կը գոյանան. բերք որ անձրւ  
կուգայ նորա մէկ մասը զետինի տակ կերթայ մինչեւ  
գեղին հողը (կաւը<sup>2)</sup>). դեղին հողը, ինչպէս յայտնի է,  
ջուր չի ծիլ, այլ իւր վրայէն կըսահեցնէ դէպի ցած  
կողմերը. ջուրը գնալով գնալով մէկ աղատ ծակ կը գտնէ  
և դուրս կ'ելլէ: Այդ ծակի անուննէ ակ կամ աղբերակ<sup>3)</sup>.  
իսկ բոլորը կ'ասուի աղբիւր:

Աղբիւրի ջրի համը կախուած է այն հողէն, որի  
վրայով նա կ'անցնի. իսկ ջերմութեան (տաքութեան) աս-  
տիճանը կախուած է այն պարագայէն, թէ ո՞րքան խոր  
մտել է նա հողի տակ: Ինչպէս յայտնի է, քանի զետնի  
մէջ խորունկնանք՝ այնքան աւելի տաքութիւն կը դգանք  
այնտեղ: Այդ տաքութեան պատճառն է հողադնդիս մէջ  
գտնուած կրակը: Այս կերպ կըմելնուի զանազան տաք,  
թիւ, երկաթախառն և ուրիշ յատկութիւն ունեցող  
ջուրերու գոյութիւնը: Ակափսի ջրերը, որ հանքալին<sup>4)</sup>  
ևս կ'ասուին՝ շատ անգամ բժշկական յատկութիւն կ'ու-  
նենան:

Գետ<sup>5)</sup> կ'ասուի բաւականին մեծ, լայն և խորունկ  
վազող ջուր: Գետը ըստ մեծի մասին ծովի մէջ կըթա-  
փուի: Գետերը կըգոյանան անձրւերէ, հալած ձիւներէ,  
աղբիւրներէ, և այն: Փոքրիկ զետերը կ'ասուին գետակ<sup>6)</sup>,

<sup>1)</sup> туча, <sup>2)</sup> глина, <sup>3)</sup> родникъ, источникъ, <sup>4)</sup> мине-  
ральный, <sup>5)</sup> рѣка, <sup>6)</sup> рѣчка.

գետակ<sup>1)</sup>: <sup>2)</sup> չեղեղատ<sup>2)</sup> կ'ասուի այն վազող (հոսող)  
ջուրը, որ սաթերու վրայ եկած անձրւերէն կամ հալած  
ձիւներէն վայր կ'իջնի: Առու<sup>3)</sup> կ'ասուի գետէն կամ  
հեղեղատէն առած և պարտէզի կամ քաղաքի մէջէ ան-  
ցուցած փոքրիկ ջուրը:

Գետաբերան<sup>4)</sup> կամ առաջք կ'ասուի այն մասը գե-  
տին, որն կըփափուի ծով և կամ մէկ ուրիշ գետ: Դել-  
տա<sup>5)</sup> կ'ասուի այն տեղը, ուր գետը մէկ բարձր տեղի  
առջեւ երկու կըբաժնուի և այդ (երկու գետաբերանով կը-  
թափուի ծով և կընմանի յունաց  $\Delta$  դէլթա դրին:  
Մանծաղ<sup>6)</sup> կ'ասուի գետի կամ ծովի այն տեղը,  
որ խորունկ չէ, և ծածկած է աւագով: Ջրուղի<sup>7)</sup> կ'ա-  
սուին գետի այն խորունկ տեղերը, ուստի կարող են մեծ  
մեծ նաւեր անցնելու: Խութք<sup>8)</sup> կ'ասուին գետի կամ  
ծովի այն տեղերը, որոնք ծածկած են քարերով, որոնց  
նաւերը զարնուելով կարող են սաստիկ վնասուել: Ջրվէժ-  
կամ քարավազ<sup>9)</sup> կ'ասուի այնպիսի գետ կամ վտակ, որ  
բարձր տեղէ վայր ընկնելով կըփրիրայ և սաստիկ խո-  
խոջումն կ'հանէ. թէև ջրվէժը ընութեան գեղեցիկ տե-  
սարան է, բայց շատ վտանգներու պատճառ կարող է  
լինել. ձուկերը անգամ նորա մէջ ընկնելով կը սաստիկն:  
Գետակից<sup>10)</sup> կ'ասուի այնպիսի գետ, որ կ'հոսէ ոչ դէպի  
ծով, այլ կըխառնուի մէկ ուրիշ գետի հետ:

Ջրարաշի<sup>11)</sup> կ'ասուի այն բարձր տեղը, որն երկու  
հովիտ իրարէ կըբաժանէ, և նորա վրայ եկած անձրւերէ  
կամ հալած ձիւնի ջուրը երկու կըբաժանուի մէկը այս

<sup>1)</sup> ручей, <sup>2)</sup> потокъ, <sup>3)</sup> каналъ, <sup>4)</sup> устье, <sup>5)</sup> дельта,  
<sup>6)</sup> мель, <sup>7)</sup> фарватеръ, <sup>8)</sup> порогъ, подводные камни, шкеры,  
<sup>9)</sup> водопадъ, <sup>10)</sup> притокъ, <sup>11)</sup> водораздѣлъ.

կողմ և միւսը այնկողմ կըհօսի (կըվազէ): Ն. Նախիջեւանի Օրթա-Օբան ջրաքաշխէ Թօն և Թէմէռնիք գետերու համար:

Ֆովակ և լիճ<sup>1)</sup> կ'ասուին երկրիս վրայի մեծամեծ փոս տեղերը, ուր մեծ քանակով<sup>2)</sup> ջուր կըժողովուին: Քըշեղը<sup>3)</sup> կ'ասուի շատ փոքրիկ լիճը:

Եթէ մէկ փոս տեղ անձրւել կամ հալած ձիւնի ջուրը ժողովուի և առաջ երթալու (Հոսելու) տեղ չունենայ՝ կ'ասուի մօրատ կամ ճահիճ<sup>4)</sup>: Մօրատի մէջ կըբսնին եղէք<sup>5)</sup>, պրտու<sup>6)</sup> և կիւն<sup>7)</sup>: Թառարքու կ'ասուի բւեռալին աշխարհին այն տեղերը, ուր ջուրը և հողը մէկ մէկու վրայ խաւ-խաւ կեցած են, այնպէս որ նորա ամենաստորին մասը ջուր է իսկ նորա վրան պաղած հող է: Եթէ այդ գետնի վրայ ամուր-ամուր քալես՝ նա ոտքիդ տակ բարակ տախտակի նման կ'երերայ:

Եւրոպայի նշանաւոր գետերը սոքա են՝ Փէչոռա, Հիւսիսալին Գուինա, Յնեղա, Նեվա, Նառօվա, Արևմտեան Գուինա, Նիեման, Վիսլա, Յդեռ, Ելլա, Վէզէռ, Ուէն (Հունոս), Սենա, Լոռու, Գառօննա, Թէխո, Գուադալպինիու, Երու, Թօնա, Փօ, Գանուր, Դնիեփր (Բօրիսթէն), Գոն (Թանայիս), Վոլգա (Եթիլ) և Ռուայ:

Եւրոպայի նշանաւոր լլոճերը սոքա են՝ Լադօգա, Յնեղա, Իլլին, Չուդ, Վէնէռ, Վէթթէռ, Մէլառ, Ժենեվա, Բոդէն, Ելլթօն:

Մթնոլորտ<sup>8)</sup> կ'ասուի այն օդեղէն կեղեր, որն ամեն կողմէն շրջապատած է մեր բնակած երկրագունդը: Մթնոլորտի ստուարութիւնը (Հաստութիւնը) 200 վեռսթ-

<sup>1)</sup> озеро, <sup>2)</sup> количество, <sup>3)</sup> прудъ, <sup>4)</sup> болото, <sup>5)</sup> тегъ, <sup>6)</sup> камышъ, <sup>7)</sup> осока, <sup>8)</sup> атмосфера.

է: Քանի վեր բարձրանաս՝ օդը այնքան անօսր և թեթև է: Օդի մէջ գոյացած ամեն երևոյթներ կ'ասուին օդերկոյթ<sup>1)</sup>: Յօղը<sup>2)</sup>, Եղեամը<sup>3)</sup>, մէզը կամ մառախուզը<sup>4)</sup>, ամպը, անձրւել և կարկուտը օգերևոյթներ են: Յօշ կ'ասուի այն օգալին ջուրը, որն երբ իջնէ մի առարկալի վրայ՝ քրտինքի նման կ'երեւայ մեզ: Եղեամը նոյն ցողն է, բայց սառած, և կընմանի ձիւնի: Մէգ կամ հաստիուող կ'ասուի այն գոլրշիները, որ ցրուած են օդի մէջ և գետնի երեսին կըլողան: Անչու կ'ասուի այն ջրի կաթիլ-ները, որոնք ամպերէն վայր կ'ընկնին: Երբոր անձրւել սաստիկ է՝ նորա կ'ասեն՝ տեղ, տարափ, տեղատարափ և ջաղը<sup>5)</sup>: Զիւս<sup>6)</sup> նոյն անձրւեն է, բայց ցրտութենէն սառած: Զիւնի հատիկները աստղի ձև ունին: Եթէ ձիւնը սաստիկ քամիով գայ՝ կ'ասուի բուռ<sup>7)</sup>: Կորէռու<sup>8)</sup> կ'ասուի անձրւել կաթիլները, որ օդի մէջ սառած ցած կ'ընկնին: Կվատելին այն է, որ կարկուտը միայն ամառը կուգայ: Հողմ<sup>9)</sup> կամ քամի ասելով մենք պիտի հասկանանք օդի հոսումնը մէկ տեղէ միւս տեղ: Հողմը այսպէս կրգոյանալ. Եթէ մէկ տեղ տաք է և միւս տեղ ցուրտ է, ցուրտ տեղէն պաղ օդը ցածէն կ'երթայ դէպի տաք տեղը, իսկ վերէն տաքութիւնը տաք տեղէն կ'երթայ դէպի ցուրտ տեղը: Այս կերպով, ցուրտի ու տաքի երթալէն օդը կըշարժի և կըզոյացնէ հողմ կամ քամի: Քամիին պատճառն են՝ արեգակը, որ կըտաքցնէ. Տովը և մեծամեծ գետերը, որ կըզոյացնեն օդը, բւեռալին աշխարհքը, որ կուտայ իւր սոսկալի ցուրտերը և հասարակածի տաք տեղերը, որոնք կ'տարածեն իրենց տաքութիւնը:

<sup>1)</sup> метеоръ, <sup>2)</sup> роса, <sup>3)</sup> иней, <sup>4)</sup> туманъ, <sup>5)</sup> ливень, <sup>6)</sup> снѣгъ, <sup>7)</sup> мяатель, <sup>8)</sup> градъ, <sup>9)</sup> вѣтеръ.

Ալեքսին նայելով քամին երեք տեսակ կ'լինի՝ սիւդ <sup>1)</sup> , մըրիկ <sup>2)</sup> և փոթորիկ <sup>3)</sup> : Սեպէ կ'ասուի կամաց փչող քամին, որ ամառուայ ժամանակ կըչափաւորէ տօթի <sup>4)</sup> սաստկութիւնը : Մըրեն կ'ասուի դէպի մէկ կողմ փչող ամուր քամի : Փոթուկէ կ'ասուի այն քամին, որ ամեն կողմէն սաստիկ փչելով տուներ կըտապալէ, ծառեր արմատէն կըխլէ և ծովի վրայ նաւակոծութիւն կըպատճառէ :

Կիմա <sup>5)</sup> կ'ասուի երկրի այն յատկութիւնը, որ կըտանայ նա տաքութենէ և խոնաւութենէ : Երբոր մէկ երկր մօտիկ է ըսեռին՝ նա ցուրտ է, եթէ մօտիկ է հասարակածին՝ նա տաք է . նմանապէս եթէ մէկ երկր մօտիկ է ծովի՝ նա խոնաւ է, եթէ հեռու է ծովի՝ նա չոր է : Այսպէս կան տաք և ցուրտ, խոնաւ և չոր կիմաներ : Բարեխառն <sup>6)</sup> կիմա կ'ասուի այն տեղը, որ ոչ ըսեռին մօտիկ է, որ ցուրտ լինի և ոչ հասարակածին մօտիկ է որ անտանելի տաք լինի :

Մարդս ամեն աշխարհներու մէջ կարող է կենալ ըսեռախին անտանելի ցրտերէն սկըսած մինչեւ հասարակածի հնոցի նման տաք տեղերը . բայց առաւելապէս նա կըկենայ բառեխառն և պտղաւէտ աշխարհներու մէջ, կըբազմանայ այնտեղ և կըլուսաւորուի : Սաստիկ ցուրտը և սաստիկ տաքը հաւասարապէս արդելառիթ են լուսաւորութեան և յառաջադիմութեան :

Կըտաքին ձեւն նայելով մարդիկ հինգ ցեղ <sup>7)</sup> կըբաժանուին Կաւկասեան, Մուղալի, Մալայեան, Աֆրիկեան և Ամերիկեան : ա) Կու-է-տու-է-ան ցեղը ունի սպիտակ մարմին . կըբնակի Եւրոպակի, արևմտեան Ասիայի մէջ . նմանապէս

<sup>1)</sup> зефиръ, <sup>2)</sup> буря, вихрь, <sup>3)</sup> ураганъ, <sup>4)</sup> зной, <sup>5)</sup> климатъ, <sup>6)</sup> умъренный, <sup>7)</sup> паса.

տարածուած է մնացած ամեն աշխարհներու մէջ : Կաւկասեան ցեղին կըպատկանին հայերը, ռուսերը, լոյները, գերմանացիք, գաղղիացիք, և այն; բ) Մուշուկ ցեղը թուով 600 միլիոն է . մարմնու գոյնը մուգ-դեղին, աչքերը նեղ . կըբնակի Ասիոյ մէջ : Սոցա կըպատկանին խալմուխները, Զինացիք, Թաթարները, Խօղայները, Խըռ-խըռները, և այն: Մալայեան ցեղի մարմինը գարշինի (գարշսինիկ) գոյն է, այսինքն ցխոտ-կարմիր . կըբնակի չնդկական ովկիանոսի կղզիներու մէջ : Անդիւ-է-ան ցեղի մարմինը պղընձի (փախըռի) գոյն է . օրէ օր կըպակօի թուով, սաստիկ վարենի է, կըփախչի լուսաւորութենէ :

Կենցաղին <sup>1)</sup> նայելով մարդիկ կըբաժանուին երեք տեսակ՝ վարենի, վրանաբնակ <sup>2)</sup> և նստուկ <sup>3)</sup> : Վայրէնիւրը հաստատ բնակութիւն չունին . օրէնք չեն ճանչնալ . կ'ապին վայրի բոյսերով, արմատներով և էրէներ որսալով: Վայրէնիւրը թէև իրենց ցեղապետի (նահապետի) իշխանութեան տակ են, բայց հաստատ բնակութիւն չունին . իրենց հօտերով և խաշինքով կըշրջին, ուր որ կըգտնեն արօտ և ջուր: Նորու-է աղգերը կըբնակին մի որոշ տեղ, ունին հայրենիք, օրէնք և կառավարութիւն:

Կառավարութիւնը կըլինի միապետական <sup>4)</sup> և հասարակապետական <sup>5)</sup> : Եթէ պետութեան իշխանը մի անձն է, այնժամանակ այդպիսի կառավարութեան ձեւը կ'ասուի Քաղէպահէն, Քահէնէն իշխանութիւն . իսկ եթէ իշխա-

ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ԻНՍԻՏՈՒՏԱ  
ՀԱՅՈՒՆՈՎԵԴԵՆԻ  
Ակադեմիա Խայ  
ՀՍՍՀ

<sup>1)</sup> образъ жизни, <sup>2)</sup>nomadы, кочующіе, <sup>3)</sup> осѣдлый, <sup>4)</sup> единодержавный, <sup>5)</sup> республиканскій.





շաբան, ըստու մովելութեամբ՝ մա ազա (մովելու ձա)

անոնք մովելութեամբ՝ ըստութեամբ՝ մովելու մա ազարաց

ամբանու մովելութեամբ՝ մովելու մա ազարաց այսու այսու

**Բ. ՀԱՅՈՅ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ**

Հայերուս ազգապետն է Հայկը՝ Յաքեթի թոռնորդին,  
որ յետ աշտարակաշինութեան իւր ժողովրդովը յետ դար-  
ձաւ դէպի Հայաստան, և Արարատի դաշտի մէջ գտաւ  
ուրիշ հայերու, որոնք աշտարակաշինութեանը անխառն  
էին: Դոցա ամենին ժողովեց, իւր ընտանեացը հետ միա-  
ցուց և ինքը եղաւ նոցա կառավարիչը: Հայկ լաւ կար-  
գաւորեց իւր ժողովուրդը, իւր որդոց և թոռանց համար  
շինեց քաղաքներ և անուն դրեց Հայկաշէն:

Բէլ կամ նեբրովդ, որ նինուէ կընստէր, լսելով  
Հայկի թագաւորելը՝ նախանձեցաւ և իւր զօրքը առած  
գնաց նորա դէմ: Վահանայ ծովի մօտ պատերազմը սկըսեցաւ,  
Հայկ նետով սպանեց Բէլին և նորա զօրքը ցըռեց:

Անկէ ետև աւելի կարգաւորելով իւր տէրութիւնը և  
ընդարձակելով իւր աշխարհը՝ թագաւորական փառքով  
մեռաւ և իւր իշխանութիւնը թողուց իւր Արմենա՛ անու-  
նով անդրանիկ որդուն, որի անունով, ինչպէս հաւա-  
նական է կարծել, օտարները մեր ազգին սկսան Արմէն  
կոչելու:

Հայկ ապրեցաւ աշխարհիս երեսին 246 տարի և  
թագաւորութիւն արաւ 80 տարի: Նորա որդիքը զանա-  
զան ցեղերու ազգապետներ եղաւ և Հայոց նախարարա-  
կան տներուն իրենց անունները տուին, ինչպէս՝ Խոռոչո-  
ռունիք, Քնունիք, և այն:

Արմենակ նոյն քաջութեամբ թագաւորեց և ծաղկե-

ցուց Հայաստանը, սակայն նորա որդին Արմենը առաւել  
զօրաւոր և խոհեմ լինելով գրեթէ բոլոր Ասիային տիրեց  
մինչև Հնդկաստան, և խստիւ հրամակեց, որ ամեն ազ-  
գեր հայերէն խօսին: Թէև ուրիշ պատմաբաններ կ'ասեն,  
որ արմէն խօսքը Արամ անունէն ելած է, բայց այդ հա-  
ւանական չէ:

Արամի սերունդը որդոց որդի թագաւորեց Հայաս-  
տանի մէջ մինչև Պարոյը: Պարոյը այնքան ընդարձակեց  
Հայաստանը և այնպէս փառաւոր թագաւորեց, որ օտար  
աշխարհներու թագաւորները նորան թագով պատեցին, որն  
առաջուայ հայ թագաւորները սովորութիւն չունէին կրելու:  
Հայկին յառաջ եկած թագաւորները Հայաստան կա-  
ռավարեցին 1779 տարի. Հայկազնց հարստութեան վեր-  
ջին թագաւորն էր Վահէ, որն Աղէքսանդր Մակեդոնացիի  
աշխարհակալութեան միջոցին պատերազմով զնաց նորա  
դէմ, բայց կռուի մէջ սպանուեցաւ և Հայաստան հար-  
կատու եղաւ մակեդոնացւոց: Այդ միջոցին թէև Հայաս-  
տան իւր հարազատ թագաւորը չունէր, բայց հայերը կր-  
կառավարուէին իրենց սեպհական նախարարներէն և իշ-  
խաններէն:

Վահէ թագաւորի մահէն յետ ութսուն երկու տարի  
անցած՝ Պարթէ ազգէն մէկ իշխան, անունը Արշակ, Քու-  
շաստանէն եկաւ, մակեդոնացիներուն յաղթեց ու արտաքսեց  
ու ինքը տիրապետեց Հայաստանին և Պարսկաստանին,  
և թագաւորեց երեսուն մէկ տարի: Սորա թոռը Արշակ  
Երկրորդ, աւելի զօրանալով, իւր իշխանութիւնը մինչև  
Հնդկաստան հասուց, և յաղթանակաւ իւր աշխարհակա-  
լութիւններէն վերագարձած իրեն առաւ Պարսկաստանը,  
իսկ իւր Վահանա՛ եղբօրը Հայաստանի վրայ թագաւոր  
կարգեց:

Վաղարշակ իսելօք և հզօր թագաւոր էր. Հայաստանը բարեկարգեց, նախարարներուն իրաւունքները կարգի կանոնի դրաւ, օրէնքներ սահմանեց, և ինչպէս աւանդութիւնը կ'ասէ՝ նա եղաւ առաջինը, որ հայոց պատմութիւնը զրել տուաւ. և որովհետև սորա նախնին Արշակն էր, այդ պատճառաւ դորա և դորա յետնորդներու պայազատութիւնը Արշակունիոց Հարստութիւն կոչուեցաւ հայոց պատճութեան մէջ, որն սկսուեցաւ Վաղարշակէն և վերջացաւ Արտաշեր թագաւորով:

Արշակունի թագաւորները հետզհետէ տիրելով չայստանին՝ շատ ճոխացուցին և փառաւորեցին մեր հայրենիքը, մանաւանդ Տէգրան և Մէհրտառ, որք աշխարհք դողացուցին:

Տիգրանի եղբօրորդին էր Աշոտը, որ եղաւ առաջին քրիստոնեաւ թագաւորը. սորա մայրաքաղաքն էր Եղեսիան: Այս ցեղէն էին Խոսրավ, նորա որդին Տրդտառ և Գյեգոր Լուսուրիչը՝ Անակայ, Խոսրով թագաւորին սպանողին, որդին:

Արշակունիք որդոց որդիք թագաւորեցին չայստանի մէջ մինչեւ Արտաշերը, որի վրայ անմիաբան նախարարները, չարախօսութիւններ անելով՝ մատնեցին պարափց թագաւորին, որ գահազուրկ Արտաշերին բանդ դնելով՝ չայստանը իրեն հարկաւու արաւ և մեր ազգը կը լաւավարէր Տարբառաներավ: Պարափց թագաւորի հրամանով այս մարզպանները ոչ միայն հարկ կը ժողովէին հայերէն և կը նեղէին նոցա, այլ և հաւատի գործերու մէջ խառնուելով՝ կուղէին քրիստոնեաւ հայերուն Հրահապաշտ դարձնել: Այնժամանակ ոտքի ելան Ղէնտ Երէյը (տէրտէրը) և Վարդան Մամիկոննեան նախարարը և չթողուցին, որ հայը ուրանաւ իւր հաւատը. Ղէոնդ երէցը չայստանէն քշեց

կրակապաշտ մոգերուն, իսկ Վարդան-Քաջը յաղթութիւններ արաւ պարսից զօրքի վրայ: Թէպէտ վերջը վերջը այս երկու սուրբ մարդիկ և նոցա հետերը նահատակութեան, բայց մեր սուրբ եկեղեցին մաքրուեցաւ և հայոց ազգը ստացաւ կրօնի ազատութիւն և ինքնավարութեան իրաւունք: Այս բանը կատարուեցաւ Վահան Մամիկոնէանի օրոք, որ Վարդանի ազգականն էր:

Արշակունեաց հարստութիւնը դադարելէն յետ հայերը 456 տարի ստրկութեան ամենադառն պտուղները քաղեցին օտար ազգերու բռնակալութենէն, մինչև որ նախախնամութիւնը խղճացաւ չայստանի վրայ և հայ ազգին պաշտպան ուղարկեց Բագրատունեաց նախարարական տունը, որոնք Ջիրակ գաւառի պայազատ իշխանը գոլով այդ աղետալի ժամանակ ամեն հայի յուսն և ապաւէնն էին: Բագրատունեաց տումէն Աշոտը ստացաւ Խշիտառ-Եշիտառ տիտղոսը, հայոց թագաւոր ճանաչուեցաւ, շատ քաջութիւններ անելով թշնամիներու դէմ և ազգին մէջ ամեն հարկաւոր բարեկարգութիւնները մտցնելով՝ վերջ գրաւ չայստանի դարաւոր ստրկութեանը: Նորա սխրագործութիւններու լուրը հասնելով յունաց կայսեր և տաճկաց խալիքալի ականջը, ամեն հնար դործ դրին Աշոտի բարեկամութիւնը վաստակելու և շտապեցին մի մի թանգագին թագ ուղարկելով՝ ճանաչել նորան հայոց թագաւոր, ըստ որում Աշոտի նախնիք անկէ առաջ միայն նախարարք և պայազատ իշխանք կը համարուէին: Այսպէս յառաջ եկաւ հայոց թագաւորութեան երրորդ հարուստանէնը, որ կ'ասուի Բագրատունէաց, որոց մայրաքաղաքն էր շքեցաշուք Անի:

Բագրատունեաց կառավարութիւնը շարունակ 224 տարի տևեց: Այդ միջոցին հայերը մեծ յաղթութիւններ

արին պարսից, արաբացւոց, յունաց և մօտաւոր ու հեռաւոր աւազալաքարոց բարբարոս ազգերու վրայ, որոնք անդադար կ'ասպատակէին Հայաստանը երկու դիտամբը, կամ կողոպտելու և կամ ժողովուրդը քրիստոնէութենէն դէպի մոլի կրօն դարձնելու ցանկութեամբ: Քանի որ թշնամիներու զէնքի դէմ զէնք և քաջութեան դէմ քաջութիւն պէտք էր դնել՝ հայերը միշտ կըլաղթէին թշնամիներուն, բայց երբոր Բիւզանդիոն սկսաւ գետնափոր ճանապարհներով, նենգութիւններով, դաւաճանութիւններով և կաշառքով ներգործելու՝ հայի պարզամիտ նախարարները գլորուեցան նորա լարած թակարդի մէջ և հետը միասին գլորեցին բոլոր Հայաստան և բոլոր հայերուն: Հայոց վերջին թագաւոր Գագին՝ աղետալի վիճակը յաւիտենական նախատինք է բոլոր յոյն տղթին և նոյա անգոսնելի քաղաքականութեան: Երիտասարդ, գեղեցկատեսիլ, քաջ Գագիկին յոյները նենգութեամբ Բիւզանդիոն (Ստամպոլ) տարին, Անիին կաշառքով տիրեցին ու յետոյ գահազուրկ Եշխանին Կիլիկիայի մօտերը սպանեցին 1080 թուականին: Գագիկի աղքականներէն մէկը, անունը Ռուբէն, այդ միջոցին ապատանեցաւ Տաւրոս սարերի մէջ և Կիլիկիա ասած գաւառի մէջ իւր չորս կողմ ժողովեց թէ այնտեղի ընիկ հայերուն և թէ Հայաստանէն փախած պանդուխուներուն, և սկսաւ հետզհետէ Կիլիկիան խլելու յունաց ձեռքէն և հալածելու նոյա և հասուց մինչև այն աստիճան, որ այդ նոր պանդիտատեղին դարձուց նոր Հայաստան և ինքնագլուխ մկսաւ պայտատելու՝ մկսած 1081 թուականին: Որուբէնի թոռը Թուրք աւելի ընդարձակեց և բարգաւաճեցուց Կիլիկիան: և որդոց որդի թաղաւորելով, երբ Լէոն նոտաւ Կիլիկիոյ աթոռը, Գերմանիոյ թագաւորը թագ ուղարկեց նորան ճանաչեց հայոց թագաւոր 1198

թուականին: Այսպէս ծագեցաւ հայոց թագաւորներու չորրորդ Հարսառաթիւնը, որ կ'ասուի Թուբէնէան: Որուբենեան հարստութիւնը տևեց 295 տարի: Այդ միջոցին հայերը անդադար պատերազմների մէջ էին առաջուայ թշնամիներու վրայ այժմ աւելացել էին հուշոց ասած վայրենի բարբարոսները և Եղիպտոսի սէլջուք առած տաճիկները, որոնց սուլթանը ՓՖ դարուն ահազին զօրքով ասպատակեց Կիլիկիան, քանդեց աւերեց բոլոր աշխարհքը և Լէոնին գերի տարաւ Եղիպտոս: Քանի մի տարիէն Լէոն ազատուելով գերութենէն, գնաց Փարիզ և վաֆսուն տարեկան մեռաւ ալնտեղ 1393 թուականին:

Այսպէս վերջացաւ Հայոց չորրորդ և վերջին թագաւորութիւնը, և այնուհետև Հայաստան ունակուս եղաւ թշնամիներէն և հայերը ցրուեցան ամեն կողմ: Այժմ Հայաստանը երեք պետութիւնների մէջ է բաժանուած: Թուսաց, Թուրքաց և Պարսից: Թուրքաստանի մէջ հայերով ամենէն բազմամարդ գաւառն է Վան: Թուրքաստանի մէջ հայերու թիւր մօտ  $3\frac{1}{2}$  միլիոն կրհամարուի: իսկ Թուսաստանի մէջ միլիոնէն շատ աւելի է: Թուսաստանի հայաբնակ քաղաքները սոքա են՝ Թիֆլիս, Երևան, Ալէքսանդրապոլ, Հին-Նախիջևան, Ճուշի, Ագուլիս, Ճամաքի, Բաքու, Աստրախան, Մողգոկ, Ղզլար, Թէոդոսիա, Սիմբերովլ և Նոր-Նախիջևան իւր հինգ գիւղերով՝ Մեծ-Սալա, Փոքր-Սալա, Չալմըր, Նիսվիթայ և Թօփտի:

Նոր-Նախիջևանը շինուեցաւ 1779 թուին, այսինքն հարիւր վեց տարի սորամէն առաջ: Ինչպէս կենգանի աւանդութիւնը կ'ասէ, թէև Խրիմէն շատ հայեր դուրս եկան դէպի այս կողմը գաղթելու, բայց հազիւ թէ երկու հազար տնտեղք (գերգաստան) միայն ողջ և առողջ հա-

սան մեր այժմուայ բնակած տեղը. մօտ երկու տարի աստանդական շրջելով ճանապարհին շատ մարդիկ մեռել են, որոնց գերեզմանները ցրուած են փերանէս նահանգի մէջ: Ն. Նախիջևանցոց գաղթականութիւնը կատարուեցաւ թուսաց կայսերուէի Եկատերինէ Բ օրով, Յովսէփ իշխան Արդութեան-Երկանաբազուկ արքեպիսկոպոսի առաջնորդութեամբ: Այս նոր գաղթականներուն շնորհուեցան 68,000 օրավար հող, մի մի ոսկի և անեփ աղիւսէ շինած տուներ՝ ի վարձատրութիւն ամբաւ կալուածներուն, որ գաղթականները թողել են Տարիկեան թերակղզիի մէջ, ինչպէս այդիներ, պարտէզներ, անտառներ, ազարակներ (խուռան), ջրաղացներ, հողմաղացներ, տուներ, եկեղեցներ, և այլն, և այլն: Այդ հողերէն 50,000 օրավար տրուեցաւ. Հինգ հայաբնակ գեղերուն, իսկ 1,000 մնաց նախիջևանցոց բաժին: Բաց յայլմանէ նախիջևանցիք ստացան զանազան առանձնաշնորհութիւններ, որք յայտնի են փէլէշէն անունով, որով շահուեցան նոքա մօտ հարիւր տարի և չորս ինքնակալք անխախտ պահեցին. Վերջին ժամակները Ն. Նախիջևանցոց իրաւունքները հաւասարեցան տէրութեան միւս հպատակներին:

Նոր-Նախիջևանը ունի եօթը եկեղեցի և մի վանք յանուն սուրբ Խաչի, որ քաղաքէս մօտ 7 վեռսթհեռաւոր է գէպի հիւսիս: Եկեղեցեաց անուններն են Լուսաւորիչ, Աստուածածին, Համբարձում, սուրբ-Նիկողոս, սուրբ-Թորոս, սուրբ-Գէորգ<sup>\*)</sup> և սուրբ-Յովհաննէս Մկրտիչ:

Մինչև 1865 թիւը Նոր-Նախիջևանցի ասելով պէտք է հասկանալ միայն քաղաքիս լուսաւորչադաւան հայ

<sup>\*)</sup> Այսպէս են եկեղեցիների ժողովրդական յորջորջմունք:

բնակիչը և այս արտօնութիւնները և հողային կալուածքները և հասարակաց շէնքերը անկազմական սեպհականութիւն են նոցա սերնդէ ՚ի սերունդ:

Ասկէց մօտ հարիւր տարի առաջ մի հնդկաբնակ հայ Մասեհ Բաբայան անունով ժառանգութիւն ժողեց յօդուտ Ն. Նախիջևանցոց Կալկաթայ քաղաքի մէջ անշարժ կալուածք, որի արդիւնքը պիտի լրացնէ տեղույս հայերի պիտոյքը, այսինքն կրթել մանուկներին, դարմանել հիւանդներին և խնամել զառամներին և տնանկներին:

1856-ին աղա Մկրտիչ Կոկոյեանը կտակեց 150,000 գումար և իւր սեպհական տունը, ուր բացուեցաւ հայ չքաւոր աղջիկների համար գիշերօթիկ վարժարան, որն կրգտնուի ողորմած կայսերուէւոյ առանձին հովանաւորութեան ներքոյ: Կտակի գորութեամբ այս պանծալի վարժարանը պիտի խնամուի և կառավարուի նախիջևանցի հայերու ձեռքով:

1873-ին Գասպար Փոփովը կոտակեց Նախիջևանին անշարժ կալուածք Ռօստով քաղաքի մէջ, որոյ արդիւնքով միջին և բարձր ուսումնարանների մէջ պիտի կրթուին նախիջևանցի լուսաւորչադաւան հայ պատանիք:

Նոր-Նախիջևանի առանձին պարծանքներէն մինն է բորբոքութան ընկերութենը, որ այժմ ունի մօտ 450 անդամք և մօտ 50,000 մայր գումար: Այս ընկերութիւնը ահա 25 տարի է որ անհամար բարերարութիւններ արել է քաղաքիս չքաւոր գասակարգին և առյապայ ևս անելու է աւելի և աւելի նշանաւոր քանակի գումարով, որն կըստանայ թէ իւր անդամներէն և թէ մայր գումարի տոկոսէն:

1867-ին հանգուցեալ Գէորգ կաթողիկոսէն հաստատուեցաւ Մարդասիրական ընկերութեան կանոնադրու-

թիւնը: Այս ընկերութեան ակզբնապատճառն է Ե. Փոփովն,  
որ գրեթե իւր պատանեկութեան օրէն անձնատուր էր  
այս գործին: Այս ընկերութիւնն ունի մօտ 10,000 մար-  
գումար, 200 անդամք և մի գպրոց, որ կըդտնուի սուրբ  
Խաչ վանքի մէջ: Բաւականին արդիւնք արդէն ցուցել է  
Հայ ժողովրդին և եկեղեցւոյն:  
1878-ին բարեկարգուեցաւ Ն. Նախիջևանի աշխատայ  
հագուբարձութեանը, որ ունի իւր սեպհական շէնքերը, որ տա-  
րէց տարի արդիւնք կուտայ մօտ 5000-ի և, բաց յայդ-  
մանէ ունի այլ ևս արդիւնք կամաւոր տուրքերէ: Այս  
բարեպաշտ հաստատութիւնը շատ կըթեթևացնէ քաղա-  
քիս չքաւոր ժողովրդի վիճակը: Վարչութիւնը հայ քա-  
ղաքացիներու ձեռք է:  
1882-ին Հիմնուեցաւ Ն. Նախիջևանի մէջ «կանանց  
ընկերութիւն», որն այսօր ունի 300 անդամք և 8,000  
մարգ գումար: Սորա նպատակն է օգնութիւն հասցնել  
չքաւոր ուսումնատենջ լուսաւորչադաւան հայ աղջիկներին:  
1880 թուականին ի լիշտակ Նախիջևանի հիմնար-  
կութեան հարիւրամեակին հիմնուեցաւ Նոր-Նախիջևանի  
մէջ Արաւական Դրդոց յատկապէս Նախիջևանի լուսաւոր-  
չադաւան հայ տղոց համար, որ կըսովորին քաղաքիս չքաւոր  
դասակարգի որդիք: Գորա ուսումնական ծրադիրն է ծխական  
դպրոցներուն և առ այժմ ունի իւր մէջ երեք արուեստանոց՝  
կօշկարութեան, երկաթագործութեան և հիւնութեան:  
Կըդտնուի հայոց թեմական առաջնորդի իրաւասութեան  
ներքոյ և կըկառավարուի Նախիջևանի հայերու (Հոգա-  
բարձուներ) ձեռքով. ծախքը կըմարէ մասամբ քաղաքի  
գանձարանը և մասամբ սուրբ Աստուածածին եկեղեցին:  
1880-ին նախիին հոգեւոր դպրոցը բարեկարգուեցաւ  
և կոչուեցաւ թեմական հոգեւոր դպրանոց: Այս միջնա-

կարգ հոգեւոր ուսումնարանը ստացաւ նոր ծրագիր Բարձ-  
րագոյն հաստատած, որով ուսումնաւարտ աշակերտք պի-  
տի ստանան զինորագրութեան արտօնութեան մասին  
երկրորդ աստիճանը և նպատակ ունին ծխական դպրոց-  
ների վարժապետներ և հայոց եկեղեցւոյ պաշտօնեաներ  
լինելու: Ունի քաղաքիս ամենազեղեցիկ տեղն մի փա-  
ռաւոր շէնք և բաւականին մեծ գումարի սեպհական փող:  
Վարչութիւնը լիապէս յանձնուած է Նախիջևանի Հայ  
ժողովրդին:

1882-ին հիմնուեցաւ Ն. Նախիջևանի մէջ «Հայփ-  
սիմեան ուսումնարան» լուսաւորչադաւան հայ աղջիկներու  
համար, որ մարդասիրաբար կըխնամուի քանի մի անձ-  
նուէր հայ օրիորդներէ, որք ձրիապէս կըկատարեն լի-  
շեալ ուսումնարանի մէջ ամեն տեսակ հարկաւոր պաշ-  
տօնները:

Բացի լիշեալ դպրոցներէս Ն. Նախիջևանի մէջ կան  
քանի մի ծխական դպրոցներ ևս, ուր կ'աւանդուին տար-  
բական ուսումնամք, և ժողովրդի խնամքով օրէ օր կըկա-  
տարելագործուին:

Նախիջևանի մէջ կան այլ ևս երկու վարժարանք,  
մինը օրիորդաց (պրօվիմնազիա) և միւսը քաղաքային,  
որք թէկ կըխնամուին քաղաքիս արդիւնքով, բաց նոցա  
վարչութիւնը տերութենէն նշանակուած աստիճանաւորների  
ձեռք է:

Նոր-Նախիջևանցոց զաւակաց գաստիարակութիւնը և  
կըթութիւնը միշտ թերի կըմնայ, եթէ նոքա չկիմնեն մի  
հանդական Պարտէն և մի հաջո բարձական Դրդոց, առաջինը քա-  
ղաքիս կենտրոնական տեղի վրայ և երկրորդը՝ սուրբ Խաչ  
վանքի մէջ:

Այսպէս՝ Ն. Նախիջևան մարդասիրական և բարե-

գործական ասպարիղի մէջ ամենապատռելի տեղն ունի  
ամեն հայաբնակ քաղաքներու մէջ, ըրբացառելով մինչև  
անդամ Ստամաոլ և Թիֆլիս: Այսպահութիւնը մասնաւու մի  
շուրջ Նոր-Նախիջևանը ունի մոտ 7,000 հայ բնակչչք:  
բաց յայդմանէ նորա մէջէն զանազան ժամանակ և զա-  
նազան առաջնին պատճառներով գաղթել են մօտաւորա-  
պէս 1500 հոգիք և այժմ կը բնակին՝ Ստաւրապոլ, Եկա-  
թերինոդար, Վլադիկավկաս, Բահմութ, Եւսք, Խօվուոս-  
սիսք և Կաւկասի բազմաթիւ գիւղերի և գիւղաքաղաք-  
ների մէջ՝ Հաւատարիմ մնայած իրենց սուրբ եկեղեցին,  
և սիրելի ծննդատեղին (մայրենիքին), որ է Նոր-Նախ-  
իջևանը: Ճակատագործ դպրոցներուն ու պահան-  
դի մասնագործ սրբացք գլուխ արև պատ-  
շար դաւադան բաւան մաս չի փականուած յանց  
մաս չի գտն մշխանց: Այս աշխարհու բազի պատ-  
շար այս ամբոխ ու առ առ պատահ մասնիք մէջ մաս-  
տի գո մի խաղաղ պատահ արդար պատահ առ առ պատ-  
շար գո մի խաղաղ պատահ արդար պատահ առ առ պատ-  
շար գո մի խաղաղ պատահ արդար պատահ առ առ պատ-  
շար գո մի խաղաղ պատահ արդար պատահ առ առ պատ-  
շար գո մի խաղաղ պատահ արդար պատահ առ առ պատ-  
շար գո մի խաղաղ պատահ արդար պատահ առ առ պատ-  
շար գո մի խաղաղ պատահ արդար պատահ առ առ պատ-  
շար գո մի խաղաղ պատահ արդար պատահ առ առ պատ-  
շար գո մի խաղաղ պատահ արդար պատահ առ առ պատ-  
շար գո մի խաղաղ պատահ արդար պատահ առ առ պատ-  
շար գո մի խաղաղ պատահ արդար պատահ առ առ պատ-  
շար գո մի խաղաղ պատահ արդար պատահ առ առ պատ-  
շար գո մի խաղաղ պատահ արդար պատահ առ առ պատ-  
շար գո մի խաղաղ պատահ արդար պատահ առ առ պատ-

շահ առ առ պատահ առ առ պատահ առ առ պատահ առ առ պատահ  
առ առ պատահ առ առ պատահ առ առ պատահ առ առ պատահ  
առ առ պատահ առ առ պատահ առ առ պատահ առ առ պատահ  
**Գ. ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ**

Քերականութիւնը կը սորուենէ ուղիղ (անսխալ) խօ-  
սել և գրել:

Մարդու երկու տեսակ կը լաւտնէ իրեն միտքը՝ կուտր-  
ու գերու:

Հայը երկու բարբառ ունի, որք են՝ կին կամ գրու-  
և նոր կամ աշխարհաբան:

Գրաբառ կ'ասուի այն բարբառը (լեզուն), որով գը-  
րուած են Հայոց աղօթքները, մեր եկեղեցական ժամա-  
սացութիւնը, աստուածաշունչը, աւետարանը ու մեր հին  
պատմութիւնները. իսկ նոր բարբառը կամ աշխարհա-  
բառը այն է, որով ամեն Հայ կը խօսէ:

Հայոց լեզուի մէջ 38 հատ տառ կան, որք են՝  
ա, բ, գ, դ, ե, զ, թ, ժ, ժ, ի, լ, լս, ծ, կ, հ, ձ,  
դ, ճ, մ, լ, ն, շ, ո, չ, պ, ջ, ու, վ, տ, ր, ց, ւ, փ,  
ք, օ, ֆ:

Տառը և զիրը իրարմէ այս զանազանութիւնը ունին,  
որ երբ գըրած է՝ կ'ասուի գեր, երբ բերանով կ'արտասա-  
նուի՝ կ'ասուի պատ:

և՝ զիր չէ, այլ վանկ է, որ բաղկացած է եր-  
զիրերէ:

Զայնին նայելով տառը կը լինի՝ երեք տեսակ՝ ձայ-  
նաւոր, բաղաձան և կիսաձայն:

Զայնաւոր տառերը տոքա են՝ ա, ե, է, լ, ի, ո, օ:  
կիսաձայն տառերը տոքա են՝ ւ, յ:

Մնացածները, այսինքն՝ թ, դ, դ, դ, թ, ժ, լ, լ,  
ծ, կ, և այն բաղաձայն են:

Զեխն նայելով հայոց լեզուն ունի երեք տեսակ գեր,  
որք են՝ գլխագեր կամ էրդալագեր, բոշը գեր և նօտր գեր  
կամ շշագեր:

Գլխագերները այսպէս կըդրուին՝ Ա, Բ, Գ, Դ, Ե, Զ,  
Ե, Ը, Թ, Ժ, Ի, Լ, Խ, Ֆ, Կ, Հ, և այն:

Բոլոր գերերը այսպէս կըդրուին՝ ա, թ, դ, դ, ե, դ,  
է, ը, թ, ժ, ի, և այն:

Նօտր գերերը այսպէս կըդրուին՝ ա, բ, գ, ր, է, չ,  
է, ը, թ, ժ, ի, և այն:

Հայոց գերերը (աժութակ) հնարեց սուրբ Մեսրովը,  
որ Մաշթոց ևս կ'ասուի: Նորա հնարածները երկաթագերեր  
էին: Երկաթագեր կոչուելու պատճառը այն է, որ  
առաջները, ինչպէս և այժմ, երկաթէ զըչով կըդրէին, որ  
ոք ևս կ'ասուէր: Սագի զըիչ և եղէգ (քալամ) յետոյ գործ  
դրուեցան:

Մարդկային լեզուն բաղկացած է ինը զանազան տեսակ բառերէ, որք կ'ասուին հասունք բանի, որք են՝ գոյական, ածական, դերանուն, բայց, ընդունելութիւն, նախադրութիւն, մակրայ, շաղկապ և միջարկութիւն:

Գոյական կ'ասուի այն բանը (իր, առարկալ) որ աշխարհքիս մէջ կայ, որն մենք աչքով կրտեսնենք, ականջով կրլսենք, ձեռքով կրընենք, հոտառութիւնով կրզանք, կամ խելքով կըհասկանանք, զորօրինակ՝ փայտ, ծառ, աստղ, արեգակ, ձայն, ամպի գոռալը, լաց, ցըտութիւն, տաքութիւն, տիւրութիւն, հոտ, թթուռութիւն, բարութիւն, չարութիւն, մաքրութիւն:

Ածական կ'ասուի այնպիսի բառ, որ կըցուցնէ գոյականի յատկութիւնը (ինչպէս լինելը) զորօրինակ խելօք

մարդ, ուժով ձի, վազուկ շուն, ամուր երկաթ, տաք ամառ:  
Այս բառերու խելօք, ուժով, վազուկ, ամուր, տաք ածական-  
ներ են, վասնզի մէկ բանի յատկութիւնը ինչպէս լինելը  
կըցուցնեն. մարդը ինչպէս է. մարդը խելօք է: Ճունը ինչ-  
պէս է, շունը վազուկ է:

Թուական կ'ասուի այնպիսի ածական, որ կըցուցնէ ա-  
ռարկաներութիւնը, զորօրինակ մէկ մարդ, չորս ծառ, քսան  
մանկի, առ աշխն գասարան, երկրորդ աշակերտ, իննե-  
րորդ պատգամ: Այստեղ՝ մէկ, չորս, քսան, առաջին, երկ-  
րորդ, իններորդ—թուական մնուններ են:

Երկու թիւ կայ՝ եղական և յոգնական: Եղականը կը-  
ցուցնէ մէկ առարկայ կամ մէկ գործ, զորօրինակ՝ գրիչ,  
տուն, մատիտ, սենեակ—մէկ մէկ հաստ են, ուրեմն եղա-  
կան են: Նմանապէս ես զնացի, դու շինեցիր, ծառը  
տնկածէ, այստեղ՝ գնացի, շինեցիր, տնկած է—մէկ մէկ  
գործ են, ուրեմն եղական են: Յագահանը կըցուցնէ շատ  
առարկաներ կամ շատ գործեր, զորօրինակ՝ գրիչներ, տու-  
ներ, մատիտներ, սենեակներ—շատ են, ուրեմն յոգնական  
են: Նմանապէս մենք գնացինք, դուք շինեցիք, ծառերը  
տնկած են—շատ գործեր են, ուրեմն յոգնական են:

Երեք տեսակ գոյական կայ՝ յատուկ, հասարակ և  
հաւաքական: Յագահանը կ'ասուի այն գոյականը, որ աշխար-  
հիս մէջ մէկ հատէ, զորօրինակ չայաստան, Վան, Արգ-  
րամ, Երասխ կամ Արաքս, Հայկ, Աէսն, Աշոտ, և այն:  
Հայաստանը կ'ասուի այն գոյականը, որին նմանը շատ կան  
աշխարհքիս երեսին, զորօրինակ՝ զրիչ, սեղան, մարդ,  
տուն, եկեղեցի: Հայաստանը կ'ասուի այն գոյականը, որ  
բաղկացած է շատ մէկ մէկու նման առարկաներ, զոր-  
օրինակ՝ պարտէզ—շատ պտղատու ծառեր, անտառ—շատ  
անպտուղ վայրի ծառեր, խաշն—շատ ոչխարներ, երամակ

շատ ձիեր, հօտ—շատ անասուններ, պար—շատ մեղուներ, զօրք—շատ զինուորներ, և այլն:

Հովհաննես կ'ասուի այն փոփոխութիւնները, որին կ'ենթարկուի բառը զանազան գործածութեան մէջ, զորորինակ՝ մարդը կուգայ, մարդուն գովեցին, մարդումէն առին, մարդով բաղդաւորէ:

Եօթը հովով կայ՝ աւշահան, աւասահան, արաշահան, հայշահան, բայտահան, գործիահան և ներդյահան:

**Ո-շշահան**      **թագաւոր**      **մարդ**      **թագ**  
**Սեասահան**      **թագաւորի**      **մարդու**      **թագի**  
**Տրահան**      **թագաւորին**      **մարդուն**      **թագին**  
**Հայշահան**      **թագաւորին**      **մարդուն**      **թագին**  
**Բայշահան**      **թագաւորէն**      **մարդումէն**      **թագէն**  
**Գործիահան**      **թագաւորով**      **մարդով**      **թագով**  
**Ներդյահան**      **թագաւորին**      **մարդուն**      **թագին**      **մէջը**

**Յոգնահան**      **թագաւորին**      **մարդիկ**      **թագիր**  
**Ո-շշահան**      **թագաւորներ**      **մարդիկ**      **թագեր**  
**Սեասահան**      **թագաւորներու**      **մարդոց**      **թագերու**  
**Տրահան**      **թագաւորներուն**      **մարդոցը**      **թագերուն**  
**Հայշահան**      **թագաւորներուն**      **մարդոցը**      **թագերը**  
**Բայշահան**      **թագաւորներէն**      **մարդոցմէ**      **թագերէն**  
**Գործիահան**      **թագաւորներով**      **մարդոցմով**      **թագերով**  
**Ներդյահան**      **թագաւորներուն**      **մարդոց մէջը**      **թագերուն մէջը**

Գլուխան կ'ասուի այնպիսի բառ, որ խօսակցութեան մէջ կըդորձածուի ուրիշ բառի տեղ, զորօրինակ՝ չէ կարելի ասել Գրիգորը պիտի գրէ, բայց Գրիգորը գրիչ չունի, այդպատճառաւ Գրիգորը գրել կարող չէ. այլ պէտք է ասել Գրիգորը պիտի գրէ. բայց նա գրիչ չունի, ուրեմն նա գրել կարող չէ: Այս խօսքի մէջ նա բառը գերանուն է, որ կըդորձածուի Գրիգորի տեղ:

Հետևեալ խեսքերը՝ ես, դու, նա, մենք, դուք, նոքա, այդ, այն, ոա, գա, նա, սոքա, դոքա, նոքա, այսպիսի, այդպիսի, այնպիսի, իմ, քու, նորա, մերը, ձերը, նոցանը, և այն, գերանուններ են:

Գերանունը երեք գէմք ունի՝ առաջինը՝ ես, երկրորդը՝ դու, երրորդը՝ նա, յոգնակին՝ մենք, դուք, նոքա:

“ , “, “ տառերը երբ որ կըդուին բառին ետև՝ նոցա կուտան նշանակութիւն իմ, քու, նորա կամ այս, այդ, այն գերանուններուն, զորօրինակ՝ գրիչս, գրիչդ, գրիչն կընշանակէ՝ այս կամ իմ գրիչը, այդ կամ քու գրիչ, այն կամ նորա գրիչը, և այդ տառերը, բառի ետև գրած՝ կ'ասուին դիմուշը յօտ:

Բայց այնպիսի բառ է, որ կըցուցնէ մէկ գործողութիւն, այսինքն մէկ բան անելը կամ մէկ բան լինելը, զորօրինակ ուտել, գրել, կարդալ, կանգնել, երթալ:

Ներգործական կ'ասուի այնպիսի բայց, երբ մէկին ուժը միւսին վրայ կանցնի, զորօրինակ՝ տղան կըսովորէ դասը. աշակերտը կըկտրէ մատիտը, վարժապետը կըգովէ աշակերտին:

Կրասորդական կ'ասուի այնպիսի բայց, երբ մէկը օտարէն ստացած զօրութիւնով բան կ'անէ, զորօրինակ՝ թուղթը կըտպուի, նամակը կըգրուի, լինձորը կ'ուտուի, և այլն: Զեղք կ'ասուի այնպիսի բայց, երբ ոչ իրեն ուժը

ուրիշի վրայ կ'երթայ և ոչ ուրիշի ոյժը իրեն վրայ կողայ, զորօրինակ՝ երթալ, ննջել (քոն ըլալ). պառկել, վասն զի չէ կարելի ասել որին երթալ, որին ննջել, որին պառկել. նմանապէս՝ կարելի չէ ասել որիմէն երթալ, որիմէն ննջել, որիմէն պառկել:

Անյոշնան կ'ասուի այնպիսի բայ, երբ մէկը պատճառ կըլինի միւսին մէկ գործ կատարելու, զորօրինակ քալցնել, քնացնել, բըսցնել:

Բայը ունի հինգ ժամանակ՝ ներկայ, անկատար, կատարելաւ, անցեալ կատարեալ և ապառնի:

Ների՞յ. կըբերեմ, կըբերես, կըբերէ, կըբերնք, կըբերէք, կըբերեն:

Անհամուր. կըբերէի, կըբերէիր, կըբերէր, կըբերէինք, կըբերէիք, կըբերէին:

Կառուրէու բերի, բերիր, բերեց, բերինք, բերիք, բերինք:

Անցեալ էրորդէու բերել էր, բերել էիր, բերել էր, բերել էինք, բերել էիք, բերել էին:

Աղոստի. Պիտի բերեմ, պիտի բերես, պիտի բերէ, պիտի բերինք, պիտի բերէք, պիտի բերեն:

Կամ բերելու եմ, բերելու ես, բերելու է, բերելու ենք, բերելու էք, բերելու են:

Հըստայան. բեր. մի բերիլ, բերէք, մի բերիք:

Ըստունելունին կամ բերի՞յ կ'ասուի այն բառը, որի ձևը զոյականի է, իսկ մէջի իմաստը (միտքը) բայի է, և ունի երկու վերջաւորութիւն՝ ող և ած՝ զրող—զրած, զրծող—զրծած, տուող—տուած, բերող—բերած: Ու վերջաւորութիւնը ներգործական է, ած'ը կրաւորական է. Գրու կընշանակէն նա որ կըզրէ, գործո՞ն նա որ կըզորձէ, որո՞ն նա որ կուտայ, բերո՞ն նա որ կըբերէ, իսկ ած կազ-

մռած վերջաւորութիւնը կրաւորական է գրոծ կամ գրուծ կընշանակէն որ գրուել է, գործած, որ գործուել է, որո՞ն որութիւնէ, բերած՝ որութիւնէ: Յու մաս ի՞ն ապար չու նմերայի ոց ապար ապար ապար: Ասիստրունին այնպիսի մասն բանի է, որ մենակն ոչինչ նշանակութիւն չունի, բայց գոյական անունի և բայի հետ դրուած՝ նոցա նշանակութիւն՝ կրտտայ: Ահա քանի մի նախադրութիւնք՝ վրայ, տակը, գէպի, ետե, ետևէն, առջե, առջևէն, մէջ, հետը, առանց, համար, մասին: Օրինակներ՝ բաժակը սեղանի կրոյ է: անձեռմէն կտուրի առաջ վախանք. բերի գեղ գնացի. թիրու չառին ետե, նստել է. ծառին ետեն մէկ չունը ծառին ետե. նստել է. ծառին ետեն մէկ տակը. երեխան տաղը բերին. հիւանդը ասաց լալկաններուն տաղը բերէք. անհաւատները մինային շւահամ ժամերուն եղ կըմորթէին հայերուն. հայը գնաց ու հետը տարաւ որդուն. վառառայ վառօղի (պարութի) ինչ պիտի անէին խեղճ վաթսուն հազար հայերը, կամայ ակամայ ցրուեցան. իրենց անկեղծ համոզմունքին համար նահաւակուեցան մեր սուրբ նախնիքը. այժմ ամենքը կըխօսին կաթողիկոսի ընտրութեան հասն:

Մահմայը այնպիսի մասն բանի է, որ բային հանդամանքը կրյալտնէ, զորօրինակ՝ ամուր վազել, կամաց խօսել, գաղտուկ երթալ, առատօրէն վարձատրել, բարձրաձայն բառբառել, կամացուկ փախչել, մերկանդամ շըջել, և այն. բայտեղ ամուր, կամաց, գաղտուկ, առատօրէն, բարձրաձայն, կամացուկ, մերկանդամ—մակբայ են:

Ճաշէտու այնպիսի մասն բանի է, որ կըմիաւորէ (կըշաղկապէ) երկու—բառ կամ երկու խօսք, զորօրինակ՝ հաւը և

աքաղաղը. — Համ ես, համ դու. — Դու գնացիր, բայց ես տանը  
մնացի. — Մղան ևս ետ չի մնաց. — Նա ունի վող, անէն  
չէ տուն ևս ունի. — Ոչ միայն ասաց, այլև ասածը գործով  
հաստատեց. — Ոչ քու գովասանքը կ'ուզեմ, և ոչ պարսա-  
ւանքը. — կ'ուզէի խմանալ եկած չէ արդեօք բարեկամս. —  
այնպէս կըպատմէ, էտքեւ Աէ աչքովը տեսած լինի. — Նա  
ամելի սիրուն է, առաջի գեղեցիկ կըկորչիս, տղայ. Աթէ  
խրատս չիկատարես: ու բայց գուշի աղբատակ մի վեցց  
գունամ ըստու զույգ ու մեջու ու մեջու ու մեջու  
— այս Մշշուռ-Միւն կամ ձախնարկութիւն այնպիսի մասն  
բանի է, որ մէկ աննշանակ վաճկով կամ ձախով կը-  
ցուցնէ մարդուս կիրքը, ալսինքն երկրողը, զարմանքը,  
հիացքը, ուրախութիւնը, արտմութիւնը, բարկութիւնը,  
և այն, զորօրինակ այ, ախ, վա, սըս, մալրիկ, սուս, վըշ  
վըշ, ծխ ծխ, փիս փիս, քըշ, հա հա հա, ձնմփ, եալժ,  
ճանկըլ ճանկըլ, և այն: Յարդս այսու շուշ ու բայր  
շոյնաշ, յորու մասնայ ծրայ միշտու յունի ոչի օվենոց  
միշտու յունու ծրայ: մասնայ յունու յունու  
և կըշց նարմանին, յանիսի թուանու, յանուայ  
այշցնոյ մարուսու, բառուար ըսիսի, զան ըսուս  
ու յուղիսի — ևս բայրիցն բառաւոյ, միան

— արմաշ միաց յո, և Պատրիք գոյանու շաշտի՛՛  
շամուշ բանու ըմբական նամացողը, Խոյուղը ովան  
միանալնու ըմբականի մարուսու, բանից յուարու  
միան և ըմբց նարմանին, յանիսի թուանու, յանուայ  
այշցնոյ մարուսու, բառուար ըսիսի, զան ըսուս  
ու յուղիսի — ևս բայրիցն բառաւոյ, միան

— ով) Եղուաթեալ ու անուան մայրէն շառացաց  
ու դառն ինու յուան ու անուան ու անուան ու անուան  
— անուան ու անուան ու անուան ու անուան ու անուան



ՀԱՅՈՆԻ  
ԱՎՏՈԽՆ  
ՊԱՆԵՐԾՈՒԹՅ  
ՀԱՅԻ ԽԱՆՈՒՅԱ  
ՀՀՀՀ

ՀԱՅ 65 Տ ԱՅ

2013

4186

«Ազգային գրադարան»



NL0059883

Н2

154

н.д

С 985

БИБЛИОТЕКА  
ИНСТИТУТА  
ВОСТОКОВЕДЕНИЯ  
Академии Наук  
СССР



Фильм № 10 4пц.

